

ՀՏԴ 340.13

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՍԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ LEX SUPERIOR ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿՈԼԻԶԻՈՆ ՆՈՐՄԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարան

Հոդվածի նպատակն է պարզել Սահմանադրության 5-րդ հոդվածի կարգավորման առարկան: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչված է սահմանելու ՀՀ իրավունքի պաշտոնական (ձևական) աղբյուրների սպառիչ համակարգը կամ թվարկելու նորմատիվ իրավական ակտերի ցանկ: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ուղղակի կամ անուղղակի ամրագրված են lex superior կոլիզիոն սահմանադրական նորմեր: Ընդ որում, սահմանադրական մակարդակում ամրագրում են ստացել միայն անառարկելի կոլիզիոն կանոնները: Այլ նորմատիվ իրավական ակտերի միջև կոլիզիաների լուծման կանոնները որոշելու հարցերը թողնված է օրենսդիր մարմնին կամ իրավակիրառողներին և իրավաբան գիտնականներին:

ՀՀ Սահմանադրական դատարանի 29.04.2021 թ. ՍԴՈ-1590 որոշումից բխեցվում է սահմանադրական նորմերի աստիճանակարգությունը:

Բանալի բառեր. Սահմանադրության 5-րդ հոդված, նորմերի աստիճանակարգություն, կոլիզիոն նորմեր, իրավական համակարգ, օրենսդրի որակյալ լուծություն:

1. Ներածություն

1.1. Ընդհանուր դրույթներ: Իրավունքի ավանդական տեսությունը, որը հիմնված է առավելապես Հ. Քելզենի գաղափարների վրա, իրավական նորմերի օրինականացումը համարում է գծակերպ գործընթաց, որի դեպքում նորմերը վավերական են (действительный), եթե հիմնավորվում են ավելի բարձր աստիճանի նորմով, քանի դեռ չեն հասել «գլխավոր նորմին»: Գլխավոր նորմի ներմուծումն անհրաժեշտ է, որպեսզի թույլ չտրվի regressus ad infinitum (շարժում դեպի անվերջություն): Քելզենի՝ նորմերի աստիճանակարգության¹ ուսմունքը վերաբերում է միայն դրանց վավերականությանը: Գլխավոր նորմը բոլոր նորմերի վավերականության աղբյուրն է [1, с. 241-242]:

¹ Աստիճանակարգություն ասելով նկատի ունենք միայն ուղղահայաց աստիճանակարգությունը, քանի որ աստիճանակարգությունը այլ կերպ չի կարող լինել:

Այնուամենայնիվ, ժամանակակից տեսաբաններն արդարացիորեն նշում են, որ այս տեսությունը ոչ լիովին է համապատասխանում ներկայիս իրավական իրողություններին [2, c. 57]: Ֆրանսիացի իրավաբան Ժ. Բեր-ժելը նույնպես նշում է, որ քելզենյան աստիճանակարգային սանդուղքը չի բավարարում ներկայացվող պահանջները, քանի որ այն վերաբերում է միայն գրավոր իրավունքի նորմերին, մինչդեռ դատական պրակտիկան և սովորույթները չեն կարող դրանում ներկառուցվել, քանի որ չեն բխում կոնկրետ իրավական ակտից: Բացի այդ, այս աստիճանակարգությունը հնարավորություն չի տալիս նաև բացատրելու ֆրանսիական օրենքի գերակայությունը ռեգլամենտի (ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի՝ Ա. Ղ.) նկատմամբ, քանի որ ռեգլամենտի իշխանությունը բխում է ոչ թե օրենքից, այլ Սահմանադրությունից [3, c. 160-161]:

Ժամանակակից իրավական համակարգում նորմերի աստիճանակարգության պատկերացումների ելման կետերը փոխվել են, օրինակ՝ դաշնության սուբյեկտի օրենքը ստորադաս է դաշնության կենտրոնի ենթաօրենսդրական նորմատիվ ակտի նկատմամբ և այլն: Դրա հետևանքով չի կարելի պնդել, որ իրավական նորմերի աստիճանակարգությունը բացարձակապես գծային է. այն կարելի է համարել խճճված աստիճանակարգություն:

Ընդ որում, «խճճված աստիճանակարգություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի ֆիզիկոս Դազլաս Հոֆշտադտերը: Խճճված աստիճանակարգությունը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ առաջին հայացքից խիստ աստիճանակարգային մակարդակները հանկարծ սկսում են ներգործել միմյանց վրա՝ խախտելով աստիճանակարգության բոլոր կանոնները: Նա այս ամենը բացատրում է հորինված խաղի քայլերի և դրա կանոնների օրինակով, իսկ վերջում եզրակացնում է. «Այն, ինչ ժամանակին եղել է հստակ աստիճանակարգային համակարգ, վերածվել է խճճված աստիճանակարգության: Քայլերը փոխում են կանոնները, կանոնները որոշում են քայլերը, և այդպես շարունակ՝ ըստ շրջանի: Այստեղ դեռ առկա են տարբեր մակարդակներ, բայց «բարձր» և «ցածր» մակարդակների տարբերություններն արդեն անհետացել են» [4]:

Բելգիացի իրավաբան Մարկ վան Հուկը փոխառել է խճճված աստիճանակարգության տեսությունը, սակայն այդ եզրույթի փոխարեն օգտագործում է «իրավական համակարգերի շրջանակերպություն» (Циркулярность) եզրույթը (այս մասին՝ հաջորդիվ): Ռուս տեսաբաններն այս երևույթն անվանում են համակարգի տարրերի «հետադարձ կապ», որի դեպքում տարրերը փոխազդում են ոչ թե վերևից ներքև, այլ ներքևից վերև [5, c. 336-337]:

Այսպիսով՝ իրավունքի վերաբերյալ գծակերպ (հիերարխիկ) մոտեցումներն ընդհանուր առմամբ բնութագրական են XIX դարի հանրային իրավունքին, սակայն XXI դարի իրավական համակարգերը դարձել են տարաշերտ և շրջանակերպ, ինչը չի կարող չազդել այդ համակարգի նորմերի աստիճանակարգության մասին ավանդական պատկերացումների վրա:

1.2. Ժամանակակից իրավական համակարգերի պարաշերտությունը և շրջանակերպությունը: Ժամանակակից իրավական համակարգերը, ընդհանուր առմամբ պահպանելով իրենց տարասեռությունը, աստիճանակարգությունը և նորմատիվ տարրերի զանազան ուղղվածությունը, միաժամանակ ձգտում են միասնականացման և ինտեգրման: Այս ամենի հետևանքով իրավական համակարգերը վերածվել են բարդ կազմակերպված և տարբեր շերտերից (մակարդակներից) բաղկացած համակարգերի՝ ազգային, ներազգային (դաշնային պետություններում), վերազգային (օրինակ՝ Եվրասիական տնտեսական միությունը) և միջազգային [6], [7], [8]:

Որպես օրինակ նշվեց, որ դաշնային պետությունների պարագայում ձևավորվել են ազգային (դաշնության կենտրոնի) և ներազգային (դաշնության սուբյեկտների) իրավական համակարգեր, որտեղ դաշնության սուբյեկտի օրենքն ունի ավելի ցածր իրավաբանական ուժ, քան դաշնության կենտրոնի մարմինների ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

Իրավական համակարգի շրջանակերպությունը նշանակում է, որ իրավական համակարգի աստիճանակարգության մեջ ստորին աստիճանի նորմերը որոշվում են բարձր աստիճանի նորմերով, իսկ բարձր աստիճանի նորմերը՝ ցածր աստիճանի նորմերով: Իրավական համակարգի շրջանակերպության գերազանց օրինակ է համաեվրոպական իրավունքը, որը սահմանում է պետական իրավունքը, իսկ պետական իրավունքը որոշում է համաեվրոպական իրավունքը [2, c. 57]:

Եվրոպայում XIX դարում տարածված էր այն մոտեցումը, որ օրենսդիր մարմնի և դատարանների միջև առկա է հստակ աստիճանակարգություն. դատարաններն անվերապահորեն պետք է ենթարկվեն օրենսդրին: XX դարում օրենսդիր մարմնի և դատարանների միջև անառարկելի աստիճանակարգության մասին պատկերացումները փոփոխվեցին: Դատարանները օրենսդրությունը անվավեր ճանաչելու իշխանություն ստացան, ինչի հետևանքով նորմատիվ իրավական ակտերի համակարգը լրացվեց նաև դատական նորմատիվ իրավական ակտերով (չշփոթել դատական նախադեպերի, այդ թվում՝ դատարանի՝ նորմատիվ բնույթի իրավական դիրքորոշումների հետ): Դատական նորմատիվ իրավական ակտերը

օրենքներ չեն, սակայն օրենքից ավելի բարձր աստիճանի ակտեր են, քանի որ կաշկանդում են օրենսդրին (օրինակ՝ սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը): Դրանք նաև ենթաօրենսդրական ակտեր չեն, սակայն դրանից ավելի բարձր աստիճանի ակտեր են, քանի որ կաշկանդում են գործադիր իշխանությանը (օրինակ՝ վարչական դատարանի որոշումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին):

Այս ամենը վկայում է այն մասին, որ մի շարք դեպքերում իրավական նորմերի կոլիզիաների լուծումը հնարավոր չէ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի գծային աստիճանակարգության մեկ միասնական բանաձևով:

Կոյր օրենսդիրը կարող է ձևացնել, որ չի նկատում նոր ձևավորված օբյեկտիվ իրողությունները, ինչպես վարվեց ՀՀ օրենսդիրը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ընդունելիս, սակայն դա բարդ հարցերից խուսափելու ամենից դյուրին ճանապարհն է: ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների իրավաբանները ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին տվել են այնպիսի մեկնաբանություն, որը հանգեցրել է անհեթեթ արդյունքների: Օրինակ՝ քննարկումների ժամանակ հաճախ նշվում է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում թվարկված չէ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը, ուստի ենթաօրենսդրական բոլոր նորմատիվ իրավական ակտերն ունեն հավասար իրավաբանական ուժ: Եթե հետևենք ասվածի տրամաբանությանը, ապա դա նշանակում է, որ ՀՀ կառավարության որոշումներն ու նախարարի հրամաններն ունեն հավասար իրավաբանական ուժ, իսկ նրանց միջև կոլիզիաները պետք է լուծել ոչ թե *lex superior*, այլ օրինակ՝ *lex posterior* կոլիզիոն նորմի հիման վրա: Այսինքն՝ եթե նախարարն ընդունել է նոր հրաման, որը հակասում է ՀՀ կառավարության հին որոշմանը, ապա պետք է նախապատվություն տալ նախարարի նոր հրամանին: Վստահ եմ, որ սահմանադիրը նման անհեթեթ նպատակ չէր կարող հետապնդել:

Բացի այս, իշխանությունների հեշտասիրությունը իրենց կանգնեցրեց համակարգային առավել բարդ հարցերի առջև, օրինակ՝ ՀՀ տարածքում Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական ակտերի կատարման ապահովումը:

ՀՀ օրենսդրի պերճախոս լռության պայմաններում խնդիրների լուծման հիմնական բեռը դրվեց իրավական դոկտրինի և դրանով առաջնորդվող իրավակիրառ մարմինների վրա:

2. *Lex superior* սահմանադրական կոլիզիոն նորմերը

2.1. *Lex superior* կանոնը: Վերադաս օրենքը վերացնում է ստորադաս օրենքի գործողությունը (*Lex superior derogat legi inferiori*): Այս կոլիզիոն նորմի (*Lex superior*) համաձայն՝ բարձր և ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմերի կոլիզիայի դեպքում ուղղահայաց առաջնություն (գերակայություն) ունի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմը (հիերարխիկ կոլիզիոն նորմ):

Lex superior կոլիզիոն կանոնի հետ առնչվում է երկու հանգամանք:

Առաջինն այն է, որ իրավական նորմերի աստիճանակարգությունը պետք է ունենա օրենսդրական հիմնավորում: Այս կապակցությամբ ռուս տեսաբանները նշում են. «Նորմատիվ իրավական ակտերի միջև բացարձակ, անառարկելի աստիճանակարգային կախվածություն կարող է գոյություն ունենալ միայն օրենքով ուղղակի նշված դեպքերում: Ցանկացած տեսական հիմնավորում, որը նշված չէ օրենքով, չի կարելի դիտարկել մի կողմից՝ որպես երկու աստիճանակարգային մակարդակների գոյության փաստ, մյուս կողմից՝ դրանց միջև կոլիզիաների լուծման համար աստիճանակարգության սկզբունքի (*Lex superior* կանոնի՝ *հեղ.*) կիրառման իրավական հիմք» [9, c. 101]:

Պոզիտիվ իրավունքը հնարավորության դեպքում պետք է էքսպլիցիտ (ուղղակի) սահմանի իրավական նորմերի աստիճանակարգությունը, որի հիման վրա հնարավոր կլինի որոշել, թե իրավական նորմերից որն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ: Միևնույն ժամանակ, հնարավոր են իրավիճակներ, երբ այս կամ այն նորմատիվ իրավական ակտի, օրինակ՝ Սահմանադրության բարձր իրավաբանական ուժն ամրագրված է իմպլիցիտ, այսինքն՝ այդ ակտի բարձր իրավաբանական ուժի հանգամանքն ուղիղ նշված չէ Սահմանադրության տեքստում, սակայն դա ինքնին չի նշանակում, որ այդ ակտը չունի բարձր իրավաբանական ուժ [10, c. 28-29]:

Ասվածը չի նշանակում, որ իրավական նորմերի աստիճանակարգությունը որոշելը սահմանադրի կամ օրենսդիր մարմնի բացառիկ իրավասությունն է: Եթե օրենքով սահմանված չէ իրավական նորմերի աստիճանակարգություն, ապա դատական մարմինները նույնպես կարող են սահմանել իրավական նորմերի միջև աստիճանակարգություն և կիրառել *lex superior* կոլիզիոն կանոնը: Դա հնարավոր է միայն այն դեպքերում, երբ իրավական նորմեր ընդունած պետական մարմինները միմյանց հետ գտնվում են անառարկելի ենթակայական հարաբերությունների մեջ, օրինակ՝ վարչապետի և նրա անմիջական ենթակայության ներքո գտնվող մարմնի ընդունած նորմերի հակասության դեպքում:

Եթե հակասող իրավական նորմերի միջև օրենքով աստիճանակարգություն սահմանված չէ, իսկ դատական մարմինները չեն կարող որոշել

այդ նորմերի աստիճանակարգությունը, ապա պետք է ենթադրել, որ հակասող նորմերն ունեն հավասար իրավաբանական ուժ, որի պարագայում *lex superior կոլիզիոն կանոնը* չի կարող կիրառվել (օրինակ՝ նախարարի և համայնքի ավագանու՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած նորմատիվ ակտերի պարագայում):

Երկրորդ հանգամանք. ի՞նչ չափանիշներով պետք է որոշել իրավական նորմերի աստիճանակարգությունը: Իրավական նորմերի աստիճանակարգությունը կախված է այն ընդունող մարմինների ենթակայական հարաբերություններից, ժողովրդի կամքի անմիջական արտահայտման աստիճանից և այլ գործոններից [9, c. 98-101], [11, c. 4-6]:

2. 2. *Lex superior կոլիզիոն նորմերի համակարգը* ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում

(a) ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչվա՞ծ է արդյոք ամրագրելու ՀՀ իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգը: Կոլիզիոն իրավունքի տեսանկյունից կարևոր է պարզել այն հարցը, թե ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչվա՞ծ է արդյոք սահմանելու ՀՀ-ում իրավական նորմերի համակարգը, թե՞ պարզապես ամրագրում է *lex superior* կանոններ: Տեսության մեջ նշվում է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը նախատեսում է նորմատիվ իրավական ակտերի սպառիչ շրջանակ (Սահմանադրություն, սահմանադրական օրենք, օրենք և ենթաօրենսդրական ակտ) և դրանց որոշակի աստիճանակարգություն [12, էջ 93]: Այս մոտեցման կողմնակիցները, կարծելով, թե Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչված է ամրագրելու նորմատիվ իրավական ակտերի սպառիչ ցանկ, եզրակացնում են, որ, օրինակ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները դուրս են այդ ցանկից, ուստի այդ ակտերը ՀՀ-ում անմիջականորեն կարող են կիրառվել Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուց հետո [12, էջ 93]:

Նախ՝ առանձին քննարկելու հարց է, թե ինչ հիմնավորմամբ է փորձ արվում վերպետական միջազգային կազմակերպության մարմինների նորմատիվ բնույթի ակտերի համար տեղ փնտրել ՀՀ պետական մարմինների նորմատիվ իրավական ակտերի համակարգում (չնփոթել ՀՀ մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերի և ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները լուծող նորմեր նախատեսելու անհրաժեշտության հետ): Միջազգային վերպետական կազմակերպությունների մարմինների ակտերի տեղը պետք է փնտրել ոչ թե ազգային օրենսդրության (նորմատիվ իրավական ակտերի) համակարգում, այլ իրավունքի պաշտոնական աղբյուրների ընդհանուր համակարգում:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում թեև թվարկվում են նորմատիվ իրավական ակտերի տեսակները (Սահմանադրություն, սահմանադրական օրենք, օրենք և ենթաօրենսդրական ակտ), սակայն

այդ բառերը, տվյալ հոդվածի կարգավորման առարկայի տեսանկյունից, որևէ նշանակալից տեղեկություն չեն բովանդակում¹: Այս հոդվածի նպատակը (կարգավորման առարկան) հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերի միջև ուղղահայաց կոլիզիաները լուծող կանոններ նախատեսելն է և ոչ թե նորմատիվ իրավական ակտերի համակարգը ներկայացնելը: Պետք է տարբերակել նորմատիվ իրավական ակտերի (իրավական նորմերի) համակարգը և իրավական նորմերի աստիճանակարգությունը:

Այսպիսով, ոչ միայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչված չէ սահմանելու նորմատիվ իրավական ակտերի սպառիչ համակարգ, այլ նաև այս հոդվածը կոչված չէ կարգավորելու իրավական նորմերը ամրագրող ակտերի (ՀՀ իրավունքի պաշտոնական աղբյուրների) սպառիչ համակարգը:

(b) ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածն արդյոք սպառի՞չ է սահմանում lex superior կոլիզիոն նորմերը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված են միայն սահմանադրական նշանակություն ունեցող lex superior կոլիզիոն նորմեր: Սահմանադիրը, բնականաբար, սահմանադրական հարթությունում է կարգավորել միայն օրենսդիր և գործադիր գործառույթներ իրականացնող մարմինների նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաների լուծումը, քանի որ վերջին երկու հարյուրամյակի ընթացքում ձևավորել է օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մասին հստակ (անվիճելի) պատկերացումներ և դրանց միջև կոլիզիաների լուծման անառարկելի կանոններ²:

Մինչդեռ ՀՀ սահմանադիրը գործադիր գործառույթ իրականացնող մարմինների ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ միմյանց միջև կոլիզիաները կամ ՀՀ դատական մարմինների նորմատիվ իրավական ակտերի (չշփոթել դատական նախադեպերի, այդ թվում՝ դատարանի՝ նորմատիվ բնույթի իրավական դիրքորոշումների հետ) կամ վերաբեռական միջազգային կազմակերպությունների մարմինների նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաների կարգավորման հարցում

¹ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ՀՀ նախագահի հաստատումը պահանջող միջազգային պայմանագրերի մասին հիշատակում նույնպես նախատեսված չէ, սակայն օրենքի մեկնաբանության «ոսկե կանոնի» խախտում կլինի, եթե ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը հասկացվի այնպես, որ հաստատված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավունքի պաշտոնական աղբյուր չեն:

² Ի դեպ, ռուսական աղբյուրներում նույնպես նշվում է, որ ՌԴ Սահմանադրությունն ընդգծել է ռուսական օրենսդրության կառուցվածքի աստիճանակարգության ակունքները, սակայն դրանում սահմանված են միայն իրավունքի ձևի առանձին տեսակների աստիճանակարգային հարաբերությունները: St'ս Толстик В. А., Иерархия источников российского права: монография. Нижний Новгород, 2002. էջ 34:

դրսևորել է որակյալ (գիտակցված) լուրջություն՝ դրանց լուծումները թողնելով օրենսդիր մարմնին կամ իրավակիրառողներին ու իրավաբան գիտնականներին:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը չի արգելում ՀՀ օրենսդրին «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով որոշել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենքն անվավեր ճանաչելու մասին որոշման (եզրափակիչ մասի) տեղը նորմատիվ իրավական ակտերի համակարգում: Այն, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ՀՀ Սահմանադրական դատարանի այս բնույթի որոշումների մասին հիշատակում չկա, չի նշանակում, որ դրանք նորմատիվ իրավական ակտեր չեն¹: Օրենսդիր մարմնին իրավասու է օրենքով սահմանել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում չնախատեսված՝ *lex superior* կոլիզիոն նորմեր:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ուղղակի կամ անուղղակի ամրագրված են *lex superior* կոլիզիոն սահմանադրական նորմեր: Ընդ որում, սահմանադրական հարթությունում ամրագրում են ստացել միայն անառարկելի կոլիզիոն կանոնները: Այլ նորմատիվ իրավական ակտերում կամ իրավունքի այլ աղբյուրներում ամրագրված նորմերի միջև կոլիզիաների լուծման կանոնները որոշելու հարցերը թողնված են օրենսդիր մարմնի, իրավակիրառողների և իրավաբան գիտնականների լուծմանը:

3. Սահմանադրական նորմերի աստիճանակարգությունը

3.1. Սահմանադրության անհակասականությունը և ինքնաբավությունը: Սահմանադրական նորմերը կարո՞ղ են արդյոք հակասել միմյանց, և սահմանադրական նորմերի միջև առկա՞ է արդյոք ներքին աստիճանակարգություն: Առանձին հեղինակներ *a priori* բացառում են սահմանադրությունների ներքին հակասության հնարավորությունը. նրանք, ըստ էության, սրբացնում են Սահմանադրությունը որպես տեքստ: Օրինակ՝ սահմանադրագետ Ա. Մանասյանը նշում է. «Սահմանադրական նորմերի (...) իրացման ընթացքում որպես ելակետ պետք է ընդունել այն տրամաբանությունը, որ սահմանադրական կարգավորումների միջև չկան և չեն կարող լինել հակասություններ: Այլ կերպ՝ վերջիններս անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե միմյանցից մեկուսացված ու միմյանց հակասող եղանա-

¹ «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքում ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտերը իրավացիորեն որակվել են որպես նորմատիվ իրավական ակտեր:

կով, այլ դրանց միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես միասնական, ամբողջական փաստաթուղթ» [15, էջ 61]:

Ինչպես նշվեց, իրավակարգը պետք է լինի անհակասական, առավել ևս անհակասական պետք է լինի նրա հենքը կազմող սահմանադրությունը: Այս առումով ուշադրության է արժանի այն մոտեցումը, ըստ որի՝ սահմանադրության՝ որպես աքսիոմատիկ համակարգի հատկություններից մեկը նրա ներքին համաձայնեցվածությունն է, առանց որի հնարավոր չէ կոնկրետ պատմական իրավակարգի հետագա զարգացումը [16, ք. 219-232]:

Այնուամենայնիվ, Սահմանադրության անհակասականության մասին դատողությունները պետք է համարել իդեալների աշխարհի մաս և չբացառել, որ իրականության մեջ սահմանադրության նորմերի տեքստային ձևակերպումները կարող են միմյանց հակասել: Այսպես՝ պրոֆեսոր Գ. Հարությունյանը նշում է. «Իր էությամբ Սահմանադրությունն ինքնաբավ է: Անկատարությունն ու ներքին հակասությունները վերաբերում են տեքստային ձևակերպումներին, որոնք պետք է հաղթահարվեն նաև սահմանադրական արդարադատության պրակտիկայում [17, էջ 352]»:

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրական դատարանը 16.04.2013 թ. ՍԴՈ-1081 որոշմամբ նույնպես նշել է. «Սահմանադրությունն ինքնաբավ է, և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով»:

Ինչ վերաբերում է Սահմանադրության ինքնաբավությանը, ապա կոլիզիոն իրավունքի տեսանկյունից կարևոր են հետևյալ հանգամանքները:

Նախ՝ Սահմանադրության ինքնաբավությունը նշանակում է, որ սահմանադրական նորմերն ընկալելու և մեկնաբանելու համար Սահմանադրությունն օժտված է սեփական միջոցներով (ռեսուրսներով): «Հիմնական օրենքի մեկնաբանման ելման դիրքը դրա ինքնաբավության ճանաչումն է: Այդ պատճառով Սահմանադրությունն ընկալելու համար անհրաժեշտ պաշարները պետք է ներդրված լինեն հենց դրանում: Առաջին հերթին այդպիսի դեր կատարում են նրա սկզբունքները, որոնցով Սահմանադրական դատարանը ղեկավարվում է իր գործունեության ընթացքում» [18, ք. 303]:

Երկրորդ՝ սահմանադրության ինքնաբավությունը նշանակում է, որ Սահմանադրության ներքին հակասությունները լուծելու համար այն օժտված է սեփական ինքնապաշտպանական միջոցներով (ռեսուրսներով): Սահմանադրագետ Ա. Մանասյանը իրավացիորեն նշում է. «Սահմանադրության ինքնաբավության էությունը կայանում է ոչ թե նրանում, որ Սահմանադրությամբ ամրագրված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման բոլոր մանրամասնությունները, այլ նրանում, որպեսզի

Հիմնական օրենքն ընձեռի քննարկվող բնագավառում առաջացող տարատեսակ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ կարգավորումներ գտնելու հնարավորություն, այլ կերպ՝ ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ» [15, էջ 59]:

Ցանկացած սահմանադրություն, այնքան ժամանակ, քանի դեռ գործող սահմանադրություն է, կոչված է ինքն իրենով հաղթահարելու իր անհամաձայնություններն ու դժվարությունները, այլ կերպ ասած՝ գործող սահմանադրությունը միշտ ինքնաբավ է կամ, մաթեմատիկական տերմինով ասած, օժտված է լրիվությամբ [19, էջ 34]:

Այսպիսով՝ Սահմանադրության նորմերի միջև հակասության հնարավորությունը չի կարելի բացառել զուտ այն փաստով, որ դրանք ամրագրված են Սահմանադրության տեքստում: Այն մարդու արարման արդյունք է, ուստի չի կարելի a priori պնդել, որ զերծ է սխալներից, այդ թվում՝ ներքին հակասություններից: Սահմանադրության ինքնաբավությունը հնարավորություն է տալիս սահմանադրությունների ներքին կոլիզիաները հաղթահարելու սեփական միջոցներով (ռեսուրսներով):

3.2. Սահմանադրական նորմերի աստիճանակարգությունը ՀՀ-ում:

Սահմանադրական իրավունքի հայկական դոկտրինում առկա է մոտեցում սահմանադրական նորմերի միևնույն արժեքի և հավասար իրավաբանական ուժի մասին: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնաթող դատավոր Վ. Պողոսյանը ուղղակիորեն նշում է. «Ի տարբերություն ՌԴ Սահմանադրության՝ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրների սահմանադրություններ, չունի որևէ նորմ, որով սահմանադրական դրույթները տարբերակվեն իրենց իրավաբանական ուժով, և այդ հանգամանքն արտահայտված է շատ հստակ «Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն» (հոդված 6, մաս 1-ին (2005 թ. խմբ., հեղ.)):

Այսինքն՝ սահմանադրական բոլոր դրույթներն ունեն միևնույն իրավաբանական ուժը, ուստի այդ դրույթներից ցանկացածը չի կարող որևէ ձևով հակասել որևէ այլ դրույթի» [19, էջ 32-33]:

Սահմանադրության նորմերի աստիճանակարգության (հիերարխիայի) մասին նշում են հայտնի սահմանադրագետներ Վ. Չիրկինը և Ս. Ավագյանը: Նրանց կարծիքով, ՌԴ Սահմանադրության նորմերի ներքին աստիճանակարգությունը դրսևորվում է հետևյալ կերպ.

1) Որոշ նորմեր առավել կարևոր են և կանխորոշում են Սահմանադրության այլ նորմերի բովանդակությունը: Դրանք սահմանադրական կարգի հիմունքներն են: Սահմանադրության այլ նորմերը, Սահմանադրության մյուս գլուխներում կատարված փոփոխությունները չպետք է հակասեն սահմանադրական կարգի հիմունքներին (նորմերի նյութական աստիճանակարգություն):

2) Առավել բարձր կարգի են Սահմանադրության անփոփոխ նորմերը (օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 9-րդ գլուխների դրույթները), այնուհետև՝ առավել բարձր կարգով փոփոխվող նորմերը, իսկ վերջում՝ ընդհանուր կարգով փոփոխվող սահմանադրական նորմերը (նորմերի ֆորմալ աստիճանակարգություն) [20, c. 67-68], [21, c. 191]:

«Սահմանադրական դատարանը 29.04.2021 թ. ՍԴՌ-1590 որոշմամբ Սահմանադրությունում փոփոխությունների սահմանադրականության ստուգման համատեքստում իմպլիցիտ ներկայացրել է սահմանադրական նորմերի աստիճանակարգության համակարգը:

Կարևոր է ընդգծել, որ «Սահմանադրական դատարանը այս որոշմամբ ուղղակիորեն չի քննարկել երկու գործող սահմանադրական նորմերի կոլիզիաների հարցեր: Այս որոշման մեջ խոսվում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի դրույթների՝ Սահմանադրության գործող նորմերի համապատասխանության ստուգման մասին: Այնուամենայնիվ, Դատարանը նշել է. «Սահմանադրական դրույթների փոփոխման կարգերի տարբերակման նպատակներն են ապահովել Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների **գերակայությունը** (...) հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ **դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը** (ընդգծումը՝ հեղ.)»:

«Սահմանադրական դատարանը հստակ նշել է, որ Սահմանադրության դրույթների փոփոխման կարգի տարբերակման նպատակը ոչ միայն ներքին կոլիզիաների կանխումն է, այլև դրանց բացահայտման դեպքում նման կոլիզիաների լուծումը: Նկատի ունենալով, որ ներքին կոլիզիաներ հնարավոր են ոչ թե Սահմանադրության փոփոխության նախագծի և գործող սահմանադրական նորմերի միջև, այլև երկու գործող սահմանադրական նորմերի միջև: Ուստի կարելի է պնդել, որ «Սահմանադրական դատարանը իմպլիցիտ սահմանել է սահմանադրական նորմերի աստիճանակարգություն և սահմանադրական նորմերի կոլիզիաների լուծման lex superior կանոններ: «Սահմանադրական դատարանի որոշման 5.3-րդ կետից կարելի է բխեցնել lex superior կոլիզիոն հետևյալ նորմերը.

ա) Սահմանադրության անփոփոխելի դրույթները գերակայում են հանրաքվեի միջոցով ընդունված (փոփոխված) նորմերի նկատմամբ, իսկ կոլիզիայի դեպքում իրավաստեղծ և իրավակիրառ մարմինները պետք է նախապատվություն տան սահմանադրության անփոփոխ դրույթներին.

բ) Սահմանադրության անփոփոխելի դրույթները գերակայում են «Ազգային ժողովի կողմից ընդունված (փոփոխված) սահմանադրական

նորմերի նկատմամբ, իսկ կոլիզիայի դեպքում իրավաստեղծ և իրավակիրառ մարմինները պետք է նախապատվություն տան Սահմանադրության անփոփոխ դրույթներին:

գ) հանրաքվեի միջոցով ընդունված (փոփոխված) սահմանադրական նորմերը գերակայում են ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված սահմանադրական նորմերի նկատմամբ, իսկ կոլիզիայի դեպքում իրավաստեղծ և իրավակիրառ մարմինները պետք է նախապատվություն տան հանրաքվեի միջոցով ընդունված նորմերին:

Միայն հանրաքվեով ընդունված սահմանադրական նորմերի կամ միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված (փոփոխված) նորմերի միջև կոլիզիաների (հորիզոնական կոլիզիաներ) բացահայտման դեպքում պետք է կիրառել *lex posterior* կամ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմերի կոլիզիաները լուծող այլ կոլիզիոն կանոններով:

4. Եզրակացություն

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կոչված չէ սահմանելու ՀՀ իրավունքի պաշտոնական աղբյուրների սպառիչ համակարգը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ուղղակի կամ անուղղակի ամրագրված են *lex superior* կոլիզիոն սահմանադրական նորմեր: Ընդ որում, սահմանադրական հարթությունում ամրագրում են ստացել միայն անառարկելի կոլիզիոն կանոնները: Այլ նորմատիվ իրավական ակտերում կամ իրավունքի այլ աղբյուրներում ամրագրված նորմերի միջև կոլիզիաների լուծման կանոնները որոշելու հարցերը թողնված են օրենսդիր մարմնի, իրավակիրառողների և իրավաբան գիտնականների լուծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Ганс Кельзен**, Чистое учение о праве. 2-е изд / пер. с нем. СПб.: 2015, 542 с.
2. **Марк Ван Хук**, Право как коммуникация. СПб.: Изд. Дом С.-Петербур. гос. ун-та, 2012, 288 с
3. **Бержель Ж. Л.**, Общая теория права. Под. общ. ред. В. И. Даниленко. Пер. с фр. М.: Изд. дом NOTA BENE. 2000, 576 с.
4. **Даглас Хофштадтер. Гедель, Эшер, Бах**, Эта бесконечная гирлянда. Самара. 2001, 752с. <https://fil.wikireading.ru/55819>
5. **Ображиев К. В.**, Система формальных (юридических) источников российского уголовного права. М.: Юрлитинформ, 2015, 504 с.
6. **Исаков И. Н.**, Разноуровневые правовые системы. М.: Юрлитинформ, 2021, 360 с.

7. **Берляевский Л. Г., Данихно С. Н.**, Классификация источников конституционного права: вопросы теории и практики. М.: Юрлитинформ, 2019, 464 с.

8. **Овсепян Ж. И.**, Источники (формы) российского права в период международной глобализации (общетеоретическое и конституционно-правовое исследование). М.: Проспект, 2016, 464 с.

9. **Толстик В. А.**, Техника иерархического построения источников права // Юридическая техника: учебник / под ред. В. М. Баранова. М.: Изд. Юрайт, 2018, 494 с.

10. **Гамбарян А. С., Даллакян Л. Г.**, Коллизионные нормы и их конкуренция. М.: Юрлитинформ, 2019, 160 с.

11. **Петров А. А.**, Факторы, влияющие на иерархию источников права, с позиций теории иерархических многоуровневых систем // Аграрное и земельное право. 2019. № 2. С. 4-6.

12. **Մարկոսյան Տ., Սանթրոսյան Ա.**, Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական ակտերի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Գիտական Արցախ: 2021, № 1 (8), էջ 93:

13. **Толстик В. А.**, Иерархия источников российского права: монография. Нижний Новгород, 2002, 216 с.

14. **Медушевский А. Н.**, Сравнительное конституционное право и политические институты. Курс лекций. М.: Изд. ГУ ВШЭ, 2002, 734 с.

15. **Մանասյան Ա. Ա.**, Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական: Եր.: «Հայրապետ» հրատ., 2019, 344 էջ:

16. **Ogleznev V., Surovtsev V.**, The Constitution as an Axiomatic System // Axiomathes. 2018. Vol. 28, 14p.

17. **Հարությունյան Գ.**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները. (լրամշակումներով). Եր.: Եժար, 2016, 672 էջ:

18. **Хабриева Т. Я., Чиркин В. Е.**, Теория современной конституции. М.: Норма, 2007, 319 с.

19. **Պողոսյան Վ.**, Սահմանադրագիտություն. նկատառումներ, հիմնախնդիրներ: Եր.: 2014, 204 էջ:

20. Сравнительное конституционное право. 2-е изд. Отв. ред. **В. Е. Чиркин**. М.: Международные отношения, 2002, 448 с.

21. **Авакьян С. А.**, Конституционное право России: учеб. пособие: в 2 т. 5-е изд., перераб. и доп. М.: Норма: ИНФРА-М, 2014, 912 с.

ИЕРАРХИЯ КОНСТИТУЦИОННЫХ НОРМ И LEX SUPERIOR КОНСТИТУЦИОННЫЕ КОЛИЗИОННЫЕ НОРМЫ

АРТУР ГАМБАРЯН

Российско-Армянский университет

Статья 5 Конституции РА не призвана определять исчерпывающую систему официальных (формальных) источников права РА или перечислять перечень нормативных правовых актов.

В 5 статье конституции РА прямо или косвенно фиксируются lex superior конституционные коллизионные нормы. Более того на уровне конституции зафиксировано только бесспорные коллизионные правила. Вопросы определения правил разрешения коллизий между другими нормативными правовыми актами оставлены законодательному органу или правоприменителям и ученым-юристам. Из решения конституционного суда 29.04.2021г. УԴՈ-1590 выводится иерархия конституционных норм.

Ключевые слова: пятая статья конституции РА, иерархия правовых норм, коллизионные нормы, правовая система, квалифицированное молчание законодателя.

THE HIERARCHY OF CONSTITUTIONAL NORMS AND THE LEX SUPERIOR CONSTITUTIONAL CONFLICT-OF-LAWS RULES

ARTUR GHAMBARYAN

Russian-Armenian University

The purpose of the article is to clarify the subject of regulation of Article 5 of the Constitution. Article 5 of the RA Constitution is not intended to define an exhaustive system of official (formal) sources of RA law or to enumerate a list of normative legal acts. Article 5 of the RA Constitution directly or indirectly establishes the lex superior collisional constitutional norms. The issues of determining the rules for resolving collisions between other normative legal acts are left to the legislature or law enforcement officers and legal scientists. The hierarchy of constitutional norms is derived from the decision of DCC-1590.

Keywords: article 5 of the Constitution, consistency of norms, collisional rules, legal system, efficient silence.

*Ներկայացվել է խմբագրություն 09.06.2021
Երաշխավորվել է տպագրության 18.10.2021*